ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 210/47-Լ «31» 10 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված՝ ԵՊՀ կրթագիտական ստորաբաժանումների ղեկավարների կողմից ԵՊՀ գիտական խորհրդին ամենամյա հաշվետվություն ներկայացնելու գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով, ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 2-րդ և 10-րդ ենթակետերի պահանջներով՝

հրամայում եմ

1. Հաստատել ԵՊՀ կրթագիտական ստորաբաժանումների ղեկավարների կողմից 2023-2024 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդին ներկայացվող հաշվետվության ձևաչափը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված հաշվետվության ձևաչափի լրացված տարբերակն անհրաժեշտ է ներկայացնել ԵՊՀ գիտական քարտուղարին՝ էլեկտրոնային տարբերակով:
3. ԵՊՀ ռազմավարական պլանավորման կենտրոնին՝ հաշվետվության ձևաչափի լրացման վերաբերյալ կրթագիտական ստորաբաժանումների ղեկավարներին տրամադրել խորհրդատվություն:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, ռազմավարական պլանավորման կենտրոնի տնօրենին, գիտական խորհրդի քարտուղարին և կրթագիտական ստորաբաժանումների ղեկավարներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ